ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը հունիսի 2018թ.
ժամը 11[30]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ.Մարդոյան)

1. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումների քննարկում և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումների քննարկում և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

1.1 «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ տեխնիկական բնութագրերը, Հավելված N6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով ընթացակարգի պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Ն. Արշակյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան